

Focus Group Survey Analysis
Faculty of Mathematics and Mechanics
MA Study Programme “Probability Theory and Mathematical Statistics”
Participation - 8 Students

Block A

Initial Ideas and Information about the Study Programme

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքների համաձայն, մասնագիտության ընտրության վրա ազդել են հետևյալ գործոնները

- Մաթեմատիկա առարկայի և ճշգրիտ գիտությունների հանդեպ սերը (3)
- Ընտանիքում մաթեմատիկայի մասնագետների առկայությունը, կամ ծնողների խորհուրդը (2)
- Ընդունվել է պատահականորեն

Բուհի ընտրության վրա ազդել են հետևյալ գործոնները

- Այլ բուհերի մասին բացասական կարծիք ունենալը
- ԵՊՀ-ն լավագույն բուհը համարելը (իր ընդունվելու ժամանակ)
- Նախընտրած բուհում (Հայաստանի Ամերիկյան Համալսարան) մաթեմատիկական ուղղվածությամբ ֆակուլտետ չլինելը
- ԵՊՀ-ում մաթեմատիկայի ուսումնասիրությունների գիտական մակարդակ ունենալը
- Բուհն ընտրել է ծնողների խորհրդով

Մագիստրոսական կրթական ծրագրի ընտրության վրա ազդել են հետևյալ գործոնները

- Բակալավրում նույն ամբիոնի ընտրությունը
- Այլ նախընտրելի ամբիոնի չբացվելը
- Ամբիոնի հանդեպ համակրանքը/սերը

Programme Awareness

Ծրագրի մասին նախապես փորձել է տեղեկանալ 2 ուսանող

- Բարձր կուրսեցիներից
- Ամբիոնից (տրամադրել են լիարժեք տեղեկատվություն)

Քննարկման մասնակիցների խոսքով, իրենց նախնական պատկերացումները չեն փոխվել ծրագրի վերաբերյալ: Բակալավրը ևս սովորելով նույն բաժնում, մագիստրոսական ծրագրի վերաբերյալ ունեցել են համապատասխան պատկերացումներ:

Block B

Students' Satisfaction with the Study Programme (Only the male students who participated in the discussion spoke about the study programme)

Որպես ծրագրի առավելություններ նշվել են՝

- Մասնագիտության ժամանակակից լինելը
- Ժամանակակից տեխնոլոգիաների մեջ մեծ կիրառում ունենալը
- Լավ դասախոսների առկայությունը

Որպես ծրագրի թերություն նշվեց

- Կրթական ծրագրի հնացած լինելը

Content of the Study Programme

Կրթական ծրագրում առաջարկվող գիտելիքների վերաբերյալ հնչեցին հետևյալ կարծիքները

- Ծրագրում չկան ավելորդ առարկաներ, բոլոր առարկաները կապված են և փոխլրացնող
- Ներկայումս ստացվող «չոր մաթեմատիկական» գիտելիքները աշխատաշուկայում պահանջված չեն
- Կարիք կա մաթեմատիկական IT ոլորտի (machine learning) հետ կապող գիտելիքների ներմուծման, ինչը ավելի հետաքրքիր է նոր սերնդին

Individual Work/Self Study

Մագիստրոսական թեզերի վերաբերյալ, ուսանողները ընդգծեցին, որ ավելի արդյունավետ կլինեն ներկայացնել սեփական ինքնուրույն աշխատանքը կարճ հոդվածի տեսքով: Նաև կարևորելով գիտական հոդվածները որպես թեզի պրոդուկտ:

Նշվեց նաև, թեզի ղեկավարների հետ արդյունավետ աշխատանքի և տրամադրվող գրականության մասին:

Ինքնուրույն աշխատանքների, թեզերի գնման դեպքի մասնակիցները չեն հանդիպել:

Educational Work-Placement/Practice

Ուսանողների խոսքով, մագիստրատուրայում ուսումնական պրակտիկա չեն ունեցել:

Այս առումով կարծիք հնչեց, որ պրակտիկայի կարիք նույնիսկ չկա:

Հնչեց նաև կարծիք, որ դժվարանում են նշել թե ինչ պրակտիկա անհրաեշտ կլինեն, որովհետև համալսարանը լիարժեք պատկերացում չի տալիս մասնագիտության

վերջնարդյունքի և կիրառման հնարավորությունների վերաբերյալ: Մեջբերում«Օրինակ՝ հիմա մեր դիպլոմի մեջ գրված է բակալավրը՝ մաթեմատիկոս ու մանկավարժ: Այսինքն երկու կատեգորիա կա, կա՛մ դասատու, կա՛մ դասախոս: Երբ այս խնդիրը լուծվի, այդ ժամանակ կկարողանանք հասկանալ, թե մեզ ինչպիսի՞ պրակտիկա է անհրաժեշտ մասնագիտության մեջ կայանալու համար»:

Teaching Methods

Հարցին, թե ի՞նչ գիտելիքներով և հմտություններով պետք է օժտված լինի դասախոսը ծրագրում արդյունավետ դասավանդելու համար, պատասխանել է 1 ուսանող:

- Տիրապետի դասավանդման հոգեբանությանը
- Ուսանողների հետ արդյունավետ հաղորդակցության հմտություններին

Որպես դասախոսների թերություն, նշվել է որոշ դասախոսների մոտ գիտելիքների պակասը:

3 ամենավաղադասախոսներ են նշվել՝

- Կարեն Գասպարյան
- Վիկտոր Օհանյան
- Մինասյան (անունը չի նշվել)

Opinion on the Learning Process

Ուսումնական գործընթացի վերաբերյալ նշվեցին հետևյալ դրական կողմերը

- Դասախոսների պատրաստակամությունը օժանդակել նաև դասաժամից դուրս
- Դասախոսի պատրաստակամությունը տրամադրել լրացուցիչ գրականություն
- Ուսանողների ինքնուրույն աշխատանքի գիտակցման կարևորություն

Եվ հետևյալ բացասական կողմերը՝

- Դասավանդման մեթոդների հնացվածություն *Մեջբերում «Տղա-բակալավրում անցնում էինք 1920-ականների մեթոդներով, իսկ մագիստրատուրայում 1990-ականների մեթոդով: Այսինքն ահագին փոփոխություն կա, բայց միննույն է հետ ենք մնացել: Բայց արտուրդ է, որ գալիս նստում ենք, դասախոսը գրատախտակին ինչ-որ բան է գրում, իսկ մենք արտագրում ենք»:*

Recommendations for Improving the Quality of Teaching in the Faculty and the Programme

- Դասախոսության նյութը նախապես տրամադրել ուսանողներին
- Դասապրոցեսի անցկացումը քննարկումների տեսքով
- Դասախոսության (թելադրության, գրատախտակին գրելու, գրատախտակից արտագրելու) մեթոդի փոփոխում՝ քննարկման ֆորմատով: *Մեջբերում «Ես*

առաջարկում եմ, որ նյութերը ուղարկեն, մենք ուսումնասիրենք, գանք կարևոր հատվածները քննարկենք:Այլ ոչ թե սահմանումներն ու բանաձևերը գրեն գրատախտակին ու ասե արտագրեք, մյուս դասին կշարունակենք»

- Քննությունը ստուգվի ստացված տեսական գիտելիքի վրա խնդիր լուծելու ուսանողի կարողությունը: Ներկայումս քննությունը պահանջում է տեսական նյութի վերարտադրում:
- Ծրագրավորման քննությունը անցկացնել ոչ թե գրավոր/թղթային տարբերակով, այլ համակարգչով
- Ուսանողի ակտիվության համար ևս միավորներ տալ, ինչը կմտոնվացնի ուսանողին
- Բացակա ուսանողների պատճառով առարկայի կուրսը կիսատ չթողնելը Մեջբերում: «*Կիսատ մնալու հետ կապված մի բան էլ կարող եմ նշել, որ օրինակ եթե մեզանից մի քանի հոգի դասի չեն գալիս, դասախոսը թեման չի փոխում ու մենք ծրագիրը ամբողջությամբ չենք հասցնում անցնենք:Ես կուզենայի Ամերիկյան համալսարանի նման լիներ, այսինքն նյութերը ամբողջությամբ մեզ տրամադրեին, չնայելով նրան, թե տվյալ դասին քանի հոգի են ներկա, քանիսը՝ բացակա:Այսինքն ուսանողի բացակա լինելը չպետք է լինի դասախոսի խնդիրը»:*
- Մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ տեղեկություն/գրականության հասանելի դարձնելը

Block C

Opinion on Yerevan State University (YSU)

Որպես ԵՊՀ դրական կողմեր նշվեցին, որ ուսանողի ուսումը խոչընդոտող հանգամանքներ չկան, և դա առավելապես ուսանողի կամքն է: Ընդհանուր առմամբ գոհ են նաև գրադարանի աշխատանքից, և դասացուցակից:

Իսկ բացասական կողմեր՝

- Բացակայում է ակտիվ գիտակրթական, ուսանողական կյանքը (աժիոտաժը)
- Տեխնիկական հագեցվածությունը բավարար չէ